



ԳՈՒՐԳԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

*ԼՂՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն, սեփականության
և փրկության գործունեության դեմ ուղղված
հանցագործությունների գործերով բաժնի ավագ դատախազ*

**ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
ՆԱԽԱԳԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿԳՅՈՒԹՅԱՆ
ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՅՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԾԱԳՈՂ
ՈՐՈՇԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**



ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի /այսուհետ՝ Նախագիծ/ 56-րդ գլուխը սահմանում է «Համագործակցության վարույթի» ծագման հիմքերն ու ընթացակարգը, դրա մասնակիցների՝ վարույթի խնդիրների ու նպատակների իրացման հնարավորությունն ապահովող փոխհարաբերությունները, մինչդեռ նախագծի վարույթի ու դատական քննության առանձնահատկությունները և այլն: Այս ինստիտուտը ՀՀ քրեական արդարադատության համակարգում նորույթ է, որի հիմնական նպատակը կազմակերպված, կոռուպցիոն բնույթի և բացարձակ գաղտնիության պայմաններում կատարվող ու պահվող այլ հանցագործությունների դեմ պայքարի նոր մարտավարությամբ մնալ հանցանքների բացահայտումն ու հանցագործների մերկացումն է:

Որպես նորարարություն, Նախագծում «Համագործակցության վարույթը» գլխում

փորձ է արվել ներկայացնել հիշյալ վարույթի շուրջ փորձ ունեցող երկրների տեսաբանների ու իրավակիրառների կողմից բարձրաձայնվող խոչընդոտների ու թերությունների՝ հնարավորինս հարթված տարբերակով, այդուհանդերձ Նախագիծն այդ առումով, մեր կարծիքով, պարունակում է որոշակի թերություններ, որոնք առանձին դեպքերում չեն ապահովում համագործակցության վարույթի մասնակիցների իրավունքների ու օրինական շահերի երաշխավորված պաշտպանությունը, համագործակցող կողմերի փոխհարաբերությունների կոնկրետությունն ու հստակությունը և այլն:

Սույն հոդվածում կփորձենք ներկայացնել Նախագծում համագործակցության վարույթի հարուցման հիմքերն ու դատախազի, քննիչի, մեղադրյալի ու նրա պաշտպանի փոխհարաբերությունները սահմանող առանձին դրույթներ, որոնք, ըստ մեզ, փոփոխման կամ լրացման կարիք ունեն:

1. Համագործակցության վարույթի հարուցման փուլում ո՞ր պահից պետք է ծագի պաշտպանի պարտադիր մասնակցությունն ապահովելու՝ քրեական վարույթն իրականացնողի պարտականությունը:

- Այսպես. Նախագծի 461-րդ հոդվածի համաձայն՝

«1. Համագործակցության միջնորդությունը հասցեագրվում է հսկող դատախազին և ստորագրվում է մեղադրյալի ու նրա պաշտպանի կողմից:

.....

3. Համագործակցության միջնորդության մեջ նշվում է, թե ինչում է արտահայտվելու մեղադրյալի համագործակցության բնույթը, ինչպես նաև այն գործողությունները, որոնք



մեղադրյալը պարտավորվում է կատարել հանցագործությունը բացահայտելուն կամ այն կատարած անձի պատասխանատվության անխուսափելիությունն ապահովելուն աջակցելու նպատակով:

4. Համագործակցության միջնորդությունը մեղադրյալի կամ նրա պաշտպանի կողմից հսկող դատախազին հանձնվում է քննիչի միջոցով: Եթե միջնորդությունը ներկայացնելու պահին մեղադրյալը պաշտպան չունի, ապա քննիչը միջոցներ է ձեռնարկում վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար և մեղադրյալին հնարավորություն է ընձեռում պաշտպանի հետ քննարկել միջնորդությունը:»¹

Հիշյալ իրավանորմերի պահանջից բխում է, որ համագործակցության վարույթի ծագման հիմքը համաձայնագիր կնքելու մեղադրյալի գրավոր միջնորդությունն է՝ ստորագրված ներկայացնողի ու պաշտպանի կողմից: Ընդ որում, Նախագիծը մեղադրյալին պաշտպանով ապահովելու պարտադիր հիմք է սահմանել՝ միջնորդությունը ներկայացնելու պահին պաշտպան չունենալը:

Նախագծի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական վարույթն իրականացնող մարմինը անհապաղ միջոցներ է ձեռնարկում վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար, եթե՝

.....

9) մեղադրյալը միջնորդել է կիրառել համաձայնեցման կամ համագործակցության վարույթ»:

Նախագծի 461-րդ հոդվածի 3-րդ մասի ուսումնասիրությունը բույլ է տալիս եզրահանգելու, որ այն պարունակում է համաձայնագիր կնքելու միջնորդության ձևի ու բովանդակության որոշակի կառուցվածք, որի պահանջների պահպանմամբ համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացվելու դեպքում միայն կարող է ծագել քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ պաշտպան չունեցող մեղադրյալին պաշտպանով ապահովելու Նախագծի 46-րդ հոդվածից բխող պարտականությունը: Նախագծի 461-րդ հոդվածի 4-րդ մասի տառացի մեկնաբանությունը վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնում է՝

ա/ հավաստիանալ մեղադրյալի կողմից ներկայացվող միջնորդությունը համաձայնա-

գիր կնքելու վերաբերյալ լինելում /որը պետք է բավարարի Նախագծի 461-րդ հոդվածի 3-րդ մասը բովանդակող պահանջները/, որից հետո ք/ ձեռնամուխ լինել պաշտպան չունեցող մեղադրյալին պաշտպանով ապահովելուն:

Այդպիսով Նախագծում տրված իրավակարգավորումը ենթադրում է, որ մեղադրյալի՝ պարտադիր պաշտպանով ապահովելու իրավունքը, հետևաբար մաս քրեական վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը, ծագում է մեղադրյալի կողմից համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացնելուց հետո՝ այն պաշտպանի հետ քննարկելու և վերջինիս կողմից ստորագրելու համար:

Կարծում ենք, պաշտպանը պետք է վարույթին ներգրավվի ոչ թե միջնորդությունը ներկայացնելուց հետո, այլ նախքան այն ներկայացնելը, որը պետք է ստորագրվի մեղադրյալի ու պաշտպանի կողմից: Ասվածը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

1. Պաշտպան չունեցող մեղադրյալի կողմից համաձայնագիր կնքելու միջնորդությամբ հանդես գալու դրսևորումները տեսականորեն կարող են արտահայտվել տարբեր ձևերով՝ միջնորդությունը /պաշտպանի հետ չքննարկված/ փոստով ուղարկելու, անձամբ կամ միջնորդավորված ներկայացնելու կամ այլ եղանակներով, որից հետո քննիչը ստանձնում է մեղադրյալին պաշտպանով ապահովելու պարտականություն՝ մեղադրյալին ընձեռելով միջնորդությունը՝ պաշտպանի հետ քննարկելու հնարավորություն: Սակայն այդպիսի պայմաններում վարույթն իրականացնող մարմինը ստանում է պաշտպանի հետ քննարկված միջնորդության բովանդակությանը ծանոթանալու հնարավորություն և դրանից ստացված տեղեկատվությունն անուղղակիորեն օգտագործելու եղանակով քննիչը կարող է ձևավորել նույն միջնորդությունը դատախազի կողմից մերժելու հիմքեր, ինչը պարունակում է մեղադրյալի իրավունքների ու օրինական շահերի ոտնահարման իրական սպառնալիք:

2. Հիշյալ փուլում պաշտպանի մասնակցությունը ենթադրում է մեղադրյալին դատավարական իրավունքների պարզաբանում և ենթադրյալ համագործակցության վարույթի շրջանակում ստանձնվող պարտականությունների ծավալի կատարման հնարավորու-



թյան, ինչպես նաև դրա արդյունքում դատախազի կողմից «ընդառաջելու»՝ պաշտպանության կողմի համար ակնկալվող տարբերակների քննարկում²: Դրանից ենթադրվում է, որ պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո մեղադրյալը կարող է նաև հրաժարվել համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացնելու իրավունքից, որի դեպքում ևս քննիչը կունենա պաշտպան չունեցող մեղադրյալից ստացված միջնորդության բովանդակությունը օգտագործելու իրական հնարավորություն:

3. Նախագծի 120-րդ հոդվածը, որը սահմանում է որպես ապացույց չբույլատրվող նյութերը, չի պարունակում համաձայնագիր կնքելու միջնորդության բովանդակությունից բխող տեղեկատվության /հատկապես այն դեպքում, երբ միջնորդությունը գտնվում է մեղադրյալի ու նրա պաշտպանի կողմից քննարկման կամ դատախազի կողմից ուսումնասիրության փուլում/ օգտագործման անթույլատրելիությունն արձանագրող պահանջ, եթե մեղադրյալը պաշտպանի հետ քննարկելուց հետո չի պնդում միջնորդությունը կամ հրաժարվում է միջնորդությունց: Պայմանականորեն ընդունենք, որ համաձայնագիր կնքելու միջնորդության մեջ նշվել էր այն անձի անունը, ում հանցագործության դեպքին մասնակցությունը հիմնավորող ապացույցներ ներկայացնելու պարտականություն էր ստանձնել մեղադրյալը: Նախքան միջնորդությունը մեղադրյալի կողմից պաշտպանի հետ քննարկելը, քննիչը ունի տվյալ անձին հարցաքննելու իրական հնարավորություն, որի ընթացքում հարցաքննվողը կարող է, օրինակ, հանդես գալ խոստովանությամբ, ներկայացնել ինքնամերկացնող ապացույցներ՝ այդ կերպ սպառելով համագործակցության առարկան, ինչը կչեզոքացնի մեղադրյալի կողմից ներկայացված միջնորդությունը դատախազի կողմից բավարարելու հավանականությունը:

Համագործակցության մասին համաձայնագիր կնքելու միջնորդության փուլում պաշտպանի պարտադիր ներգրավման մույնպիսի կարգավորում է նախատեսված նաև Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքում՝ 317-րդ³ և Դաշնության քրեական դատավարության օրենսգրքում՝ 619-րդ հոդվածով⁴:

Ներկայացվող խնդրի կապակցությամբ դատավարագետներն ընդհանուր առմամբ այն կարծիքին են, որ նախքան քննիչի կողմից մեղադրյալի ներկայացրած միջնորդության բովանդակությունից տեղեկատվություն քաղելու հնարավորության ստեղծումը, մեղադրյալին պետք է ընձեռնվի այն փաստաբան-պաշտպանի հետ քննարկելու հնարավորություն:

Որոշ հեղինակներ այն կարծիքին են, որ մեղադրյալի կողմից համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացնելու բավարար հիմքերի առկայության դեպքում քննիչը պարտավոր է նրան պարզաբանել անձամբ պաշտպան հրավիրելու կամ պաշտպան նշանակելու միջնորդություն ներկայացնելու իրավունքը:⁵ Մեկ այլ խումբ դատավարագետներ գտնում են, որ համագործակցության վարույթում պաշտպանի մասնակցությունը պարտադիր է համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացնելու մտադրության ծագման պահից⁶՝ այդպիսով արձանագրելով մեկ միասնական մոտեցում՝ համագործակցելու մտադրություն ունեցող մեղադրյալը պետք է ունենա պաշտպանության իրավունքի լիարժեք իրացման հնարավորություն՝ նախքան համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացնելը:

Ըստ մեզ՝ իրավիճակներից զերծ մնալու համար, Նախագծում նպատակահարմար է մեղադրյալի պաշտպանության իրավունքն ապահովել միջնորդություն ներկայացնելու առավել վաղ փուլում՝ մեղադրյալի կողմից նման ցանկություն ունենալու մասին հայտարարելու պահից: Այդ պայմաններում կապահովվի մեղադրյալի՝ համագործակցության եղանակների ու նպատակների շուրջ տեղեկատվության գաղտնիությունը՝ նախքան պաշտպանի ներգրավումն ու նրա հետ խորհրդակցելը, բացի դրանից մեղադրյալը ստիպված չի լինի օրենքի տարրը կատարելու համար անձամբ կազմել միջնորդության «նախագիծ»՝ բացառապես պաշտպանի ներգրավման հիմք ապահովելու և նրա հետ միջնորդությունը քննարկելու համար: Այդպիսի կարգավորման պայմաններում, պաշտպանի հետ խորհրդակցելուց և համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացնելու մտադրությունից հրաժարվելու դեպքում, մեղադրյալը կստանա նաև նախկինում ունեցած իր



մտադրության մասին հարկադիր բարձրա-
ձայնելուց խույս տալու հնարավորություն:

Վերը նշված իրավիճակները բացառելու
համար Նախագծի 41-րդ հոդվածի 2-րդ մասի
9-րդ կետը անհրաժեշտ է ներկայացնել
հետևյալ ձևակերպմամբ.

«Քրեական վարույթն իրականացնող
մարմինը չի ընդունում պաշտպանից մե-
ղադրյալի հրաժարվելը կամ անհապաղ մի-
ջոցներ է ձեռնարկում վարույթին պաշտպանի
մասնակցությունն ապահովելու համար, եթե`

.....

9) մեղադրյալը համաձայնեցման կամ
համագործակցության վարույթ կիրառելու
գանկություն է հայրկել»:

Նախագծի 507-րդ հոդվածի 3-րդ մասը
նպարակահարմար է ձևակերպել հետևյալ
բովանդակությամբ. «Միջնորդությունը մե-
ղադրյալի կամ նրա պաշտպանի կողմից դա-
րախազին հանձնվում է քննիչի միջոցով:
Եթե մեղադրյալը միջնորդությունը ներկա-
յացնելու գանկություն հայրկելու պահին չու-
նի հրավիրված կամ նշանակված պաշտպան,
քննիչը միջոցներ է ձեռնարկում վարույթին
պաշտպանի մասնակցությունն ապահովելու
համար և մեղադրյալին հնարավորություն է
ընձեռնում պաշտպանի հետ խորհրդակցելու և
միջնորդությունը քննարկելու համար»:

2. Մինչդատական համաձայնագիր կնքե-
լու միջնորդությունը և դրա վերաբերյալ քննիչի
կարծիքը արդյոք բավարա՞ր են դատա-
խազի կողմից միջնորդության կապակցու-
թյամբ որոշում կայացնելու համար և արդյոք
դատախազն իրավասո՞ւ է հիշյալ տվյալնե-
րից բացի քննարկման ընդունել այլ տեղեկու-
թյուններ:

Նախագծի 462-րդ հոդվածի համաձայն՝
համագործակցության միջնորդությունը և
դրա վերաբերյալ քննիչի կարծիքը ստանա-
լուց հետո երեք օրվա ընթացքում հսկող դա-
տախազը կայացնում է հետևյալ որոշումնե-
րից մեկը՝

ա/ համագործակցության միջնորդությու-
նը բավարարելու կամ

բ/ համագործակցության միջնորդությունը
մերժելու մասին:

Համագործակցության միջնորդությունը
մերժվում է, եթե այն չի համապատասխանում
Նախագծի 460-461-րդ հոդվածներում սահ-

մանված պայմաններին, կամ եթե հսկող դա-
տախազը տվյալ համագործակցությունը հա-
մարում է ոչ անհրաժեշտ:

Նախագծի հոդված 463-ը սահմանում է՝

«1. Համագործակցության միջնորդությու-
նը բավարարելու դեպքում հսկող դատախա-
զը քննիչի, մեղադրյալի և նրա պաշտպանի
մասնակցությամբ, կազմում է համագործակ-
ցության համաձայնագիր:

...

4. Համաձայնագիրը ստորագրում են հս-
կող դատախազը, մեղադրյալը և պաշտպա-
նը: Համաձայնագրի մեկական օրինակ
հանձնվում է մեղադրյալին և պաշտպանին:

Նախագծի 462-րդ հոդվածի վերլուծու-
թյունը թույլ է տալիս եզրահանգելու, որ դա-
տախազը համագործակցության վերաբերյալ
մինչդատական համաձայնագիր կնքելու միջ-
նորդությունը բավարարելու կամ մերժելու
մասին որոշում կայացնելիս հիմք է ընդունում
բացառապես համաձայնագիր կնքելու միջ-
նորդությունն ու քննիչի գրավոր կարծիքը:
Հիշյալ որոշմամբ դատախազը պետք է գնա-
հատման ենթարկի միջնորդությամբ ներկա-
յացված համագործակցության նպատակ-
ներն ու եղանակները և դրանք քննիչի կարծի-
քին համադրելու եղանակով որոշի համագոր-
ծակցության վարույթին անցնելու նպատա-
կահարմարությունը կամ անհրաժեշտության
բացակայությունը: Նախագծում տրված
կարգավորումից հետևում է, որ դատախազը
կաշկանդված չէ քննիչի գրավոր կարծիքում
արտահայտված դիրքորոշմամբ և կարող է
կայացնել դրան հակադիր որոշում: Ընդորում,
համաձայնագիր կնքելու միջնորդության կա-
պակցությամբ, քննիչը ենթադրաբար կարող է
արտահայտել հնարավոր երկու ուղղվածու-
թյուն ունեցող դիրքորոշում՝

ա/ կողմ լինել համաձայնագրի կնքելու
միջնորդությունը բավարարելուն,

բ/ դեմ լինել համաձայնագրի կնքելու միջ-
նորդությունը բավարարելուն:

Հարկ է նշել, որ ներկայացված միջնորդու-
թյան կապակցությամբ քննիչի կողմից դիրքո-
րոշում արտահայտելու գործընթացի վերա-
բերյալ մոտեցումները տարբեր երկրների դա-
տավարական օրենսդրությամբ որոշակիորեն
տարբերվում են:

Օրինակ, ի տարբերություն Նախագծով
նախատեսված ձևաչափի, ՌԴ-ը քրեական դա-



տավարության օրենսդրությամբ քննիչը օժտված է համագործակցության վարույթ հարուցելու կամ մերժելու հարցում վճռորոշ նշանակություն ունեցող՝ հայեցողական մղումներով գործելու բավական լայն հնարավորությամբ և կասկածյալի կամ մեղադրյալի կողմից համագործակցության վերաբերյալ միջնորդություն ներկայացվելու դեպքում՝

ա/ քննչական ստորաբաժանման բաժնի պետի հետ համաձայնեցված՝ պատճառաբանված որոշումը և կասկածյալի, մեղադրյալի կամ նրանց պաշտպանի ներկայացրած միջնորդությունն ուղարկում է դատախազին կամ

բ/ որոշում է կայացնում համաձայնագիր կնքելու միջնորդությունը մերժելու մասին, ընդ որում, այս դեպքում դատավարական օրենսդրությունը քննիչին չի պարտավորեցնում որոշումը քննարկել քննչական ստորաբաժանման ղեկավարի հետ կամ այն ուղարկել դատախազին՝ որոշման հիմնավորվածությունը պարզելը թողնելով պաշտպանության կողմի բողոքարկման իրավունքի իրացման արդյունավետությանը:⁷

Վերը նշվածներից կարելի է եզրահանգել, որ անկախ դիրքորոշում հայտնելու եղանակներից ու համագործակցության վարույթի հարուցման փուլին մասնակցության աստիճանից, միջնորդության վերաբերյալ քննիչի դիրքորոշումը կարող է պայմանավորված լինել սուբյեկտիվ-հայեցողական գործոններով, որոնք իրապես կարող են ազդեցիկ դերակատարություն ունենալ համագործակցության վարույթին անցնելու հարցը դատախազի կողմից քննարկելու պահին: Այդ պատճառով համագործակցության վերաբերյալ միջնորդության օբյեկտիվ քննարկումն ապահովելու համար դատախազի՝ առավելագույնս տեղեկացված լինելու անհրաժեշտություն է, որը պետք է ապահովվի դատավարական օրենսդրությամբ ընձեռնված լիազորությունների շրջանակում:

Մեր կարծիքով, համաձայնագիր կնքելու միջնորդության ու քննիչի գրավոր կարծիքում բովանդակվող տեղեկատվության ծավալը չի կարող բավարար ճանաչվել դատախազի կողմից միջնորդությունը պատշաճ քննարկելու և քննիչի կողմից ներկայացված դիրքորոշման /անկախ դրա բնույթից/ հիմքում դրված հիմնավորումները հերքելու կամ հաստատ-

ված համարելու համար: Այդ պատճառով նպատակահարմար է համագործակցության վերաբերյալ միջնորդության լիարժեք քննարկումն ապահովելու նպատակով, որպես պարտադիր պայման, սահմանել ի թիվս այլոց, դատախազի կողմից նաև քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունը: Այդ դեպքում դատախազը կաշկանդված չի լինի քննիչի գրավոր դիրքորոշմամբ, իսկ քննիչն իր հերթին կգրկվի անձնական դրդումների գերիշխող ազդեցությամբ գրավոր կարծիք կազմելու և դրանում սուբյեկտիվ ցանկությունները ներառելու հնարավորությունից, վերջինիս կարծիքը կհիմնվի բացառապես քրեական վարույթի նյութերին ու նախաքննությամբ ձեռք բերված ապացույցներին: Ներկայացվածի հիմնավորմանն են ծառայում ստորև բերված պատճառաբանությունները.

1. Դատախազը պետք է փաստերի գնահատման լիարժեք հնարավորությամբ ընդգծի կամ բացառի հանցավորության դեմ պայքարում համագործակցության վարույթի նպատակներից բխող հանրային շահի գերակայությունը, իսկ համապատասխան որոշումը պետք է կայացվի մեղադրյալի հետ համագործակցությամբ ակնկալվող ենթադրյալ արդյունքի իրացման հնարավորության և նպատակահարմարության կանխատեսման եղանակով: Հնարավոր են դեպքեր, երբ քննիչը շահագրգիռ չէ կոնկրետ մեղադրյալի հետ համագործակցության հարցում՝ առարկելով ներկայացված միջնորդության դեմ, պատճառաբանելով, որ համագործակցության առարկայի շուրջ նախաքննական մարմինն արդեն որոշակի ապացույցներ ունի՝ այդ կերպ արձանագրելով համագործակցության նպատակահարմարության բացակայությունը: Հնարավոր է նաև հակառակ տարբերակը՝ համագործակցության առարկայի շուրջ որոշակի ապացուցողական բազայի առկայության պայմաններում քննիչը հանդես գա մեղադրյալի հետ համագործակցության օգտին: Նման քայլի քննիչը կարող է դիմել տարբեր դրդապատճառներով՝ միջնորդության բովանդակությունից բխող հանցավոր դեպքերը կամ հանցավոր անձանց անձամբ մերկացնելու կամ մեղադրյալի նկատմամբ պետական հարկադրանքի միջոցներն ու տեսակները մեղմելու ցանկությամբ և այլն: Լիազորությունների չարաշահման հիշյալ հնարավոր



դրսևորումները բնականաբար պետք է կանխվեն դատախազի կողմից, սակայն դրանք չեն կարող բացառվել, եթե դատախազը չունենա քննիչի կարծիքում ներկայացված պնդումների հավաստիությունը քրեական վարույթի նյութերին համադրելու եղանակով ստուգելու հնարավորություն:

2. Թեև Նախագիծը մեղադրյալին ընձեռում է իր իրավաչափ շահերին առնչվող՝ վարույթի հանրային մասնակիցների կողմից ընդունված որոշումների՝ հետևաբար նաև համագործակցության վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին դատախազի որոշումը վերադաս դատախազին բողոքարկելու հնարավորություն, այդուհանդերձ բողոքը ևս ենթակա է քննարկման՝ դրանում ներկայացված ու ստորադաս դատախազի կողմից հետագոտված փաստական տվյալների շրջանակում: Բացի դրանից, բողոքարկման իրավունքի իրացումը կողմերին ընդամենը ընձեռում է խախտված իրավունքը վերականգնելու հնարավորություն, մինչդեռ քրեական դատավարության սուբյեկտների փոխհարաբերությունները պետք է կառուցվեն առավելապես սուբյեկտիվ կամայականություններից ու չարաչառումներից զերծ պահող նորմատիվ կարգավորման շրջանակում, որը թույլ կտա բացառել քրեա-դատավարական հարաբերություններում պետության անույնից հանդես եկող մարմինների ինքնիրավ գործողություններից բացառապես բողոքարկման ինստիտուտի գործադրմամբ պաշտպանվելու եղանակը, այն պետք է դիտվի որպես խախտված իրավունքի վերականգնման ծայրահեղ միջոց:

3. Նախագծով նախատեսված կարգավորման շրջանակում դատախազը ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի ուժով ոչ միայն պարտավոր է համագործակցության վերաբերյալ միջնորդությունը քննարկել դրա ու քննիչի գրավոր կարծիքի շրջանակում, այլև իրավասու չէ որոշման հիմքում ընդունել այլ սպացույցներ կամ փաստական տվյալներ:⁸ Այլ կերպ ասած՝ Նախագիծը հստակ սահմանել է այն փաստաթղթերը, որոնք դատախազը կարող է քննարկման ընդունել և դնել մեղադրյալի միջնորդությունը մերժելու կամ բավարարելու մասին որոշման հիմքում:

Այդ առումով Նախագծի 461-րդ և 462-րդ հոդվածները ենթակա են լրացման:

Նախագծի 461-րդ հոդվածի 5-րդ մասը

անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Մեղադրյալի և պաշտպանի կողմից ստորագրված միջնորդությունը ստանալուց հետո, երեք օրվա ընթացքում, քննիչը քրեական վարույթի նյութերն ու միջնորդությունը հանձնում է հսկող դատախազին՝ կցելով դրա բավարարման կամ մերժման վերաբերյալ իր գրավոր կարծիքը:

Նախագծի 462-րդ հոդվածի 1-ին մասը նպատակահարմար է ձևակերպել հետևյալ բովանդակությամբ՝ «Համագործակցության միջնորդությունը, քրեական վարույթի նյութերն ու դրա վերաբերյալ քննիչի կարծիքը ստանալուց հետո, երեք օրվա ընթացքում, հսկող դատախազը որոշում է կայացնում համագործակցության միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին»:

3. Եթե քննիչը համագործակցության վարույթին կողմ չէ ու չի ստորագրում համաձայնագիրը, ապա ինչպե՞ս և ինչի՞ հիման վրա է ծագում համաձայնագրի պայմանները կատարելու և մեղադրյալի հետ համագործակցելու քննիչի պարտականությունը:

Նորություն չէ, որ թեև մեղադրյալն ու նրա պաշտպանը համագործակցության վերաբերյալ համաձայնագիր կնքելուց շահագրգռված անձինք են, այդուհանդերձ, որպես կանոն, համաձայնագիր կնքելու հիմնական նախաձեռնողը հենց քննիչն է /որոշակի տեղեկություններ ունենալով մեղադրյալի՝ պարզման ենթակա հանգամանքների շուրջ տեղեկատվության տիրապետելու մասին, ի վերջո քննիչն է փորձում համոզել նրան համագործակցության եղանակով քրեական վարույթն իրականացնող մարմնին տրամադրել այդ ինֆորմացիան/⁹

Նախագծի 463-րդ հոդվածի համաձայն՝

1. Համագործակցության միջնորդությունը բավարարելու դեպքում հսկող դատախազը քննիչի, մեղադրյալի և նրա պաշտպանի մասնակցությամբ, կազմում է համագործակցության համաձայնագիր:

.....

4. Համաձայնագիրը ստորագրում են հսկող դատախազը, մեղադրյալը և պաշտպանը: Համաձայնագրի մեկական օրինակ հանձնվում է մեղադրյալին և պաշտպանին:

Նույն Նախագծի 464-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ համագործակցության



համաձայնագիր կազմելուց հետո տվյալ մեղադրյալի վերաբերյալ վարույթն անջատվում է: Անջատված վարույթի նյութերին պարտադիր կցվում են համագործակցության միջնորդությունը, դրա վերաբերյալ քննիչի կարծիքը, միջնորդությունը բավարարելու մասին հսկող դատախազի որոշումը, ինչպես նաև համագործակցության համաձայնագիրը:

Նախագծի 463-464-րդ հոդվածներում հստակեցվել է, որ համագործակցության վարույթի կողմերը ներկայացնում են դատախազը և մեղադրյալն ու նրա պաշտպանը: Թեև համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի կազմմանը մասնակցում է նաև քննիչը, այդուհանդերձ նա համաձայնագրի տեքստը չի ստորագրում և այդ իսկ պատճառով ճանաչվում է որպես համագործակցության վարույթի մասնակից և ոչ որպես կողմ:

Համաձայնագրի կնքման գործընթացում անհասկանալի է քննիչի մասնակցության ձևաչափի՝ Նախագծով առաջարկվող տարբերակը: Նախագծի 509-րդ հոդվածի համաձայն՝ քննիչը ընդամենը մասնակցում է դատախազի կողմից համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի կազմմանը, սակայն համաձայնագրի վերջնական տեքստը նրա կողմից չի ստորագրվում:

Քննիչի մասնակցության ձևաչափի կապակցությամբ անհամաձայնություն են արտահայտել շատ իրավագետներ: Ֆ.Կ.Ջիննուրովը և այլ տեսաբաններ նշել են, որ համաձայնագրի կազմման գործընթացում քննիչին ներգրավելն աննպատակ գործողություն է, եթե նրան չի ընձեռնվելու համաձայնագրի տեքստը ստորագրելու հնարավորություն:¹¹

Եթե համաձայնագիրը համադրենք «քաղաքացիա-իրավական գործարքների տեսակներին», ապա այն նույնական է բազմակողմ գործարքներին, որի համար ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհրաժեշտ է բոլոր կողմերի համաձայնեցված կամքի արտահայտությունը:¹² Համաձայնագրի կնքմանը մեղադրյալը ըստ էության «հայտարարում» է համագործակցության առարկայի շուրջ պայմանավորված գործողությունները կատարելու, իսկ դատախազը՝ դրա դիմաց օրենքով նախատեսվածից առավել մեղմ պատժի ենթարկելու կամ նշանակված պատիժը պայմանականո-

րեն չկիրառելու կամ մեղադրյալին պատժից ազատելու մասին: Սակայն կողմերից մեղադրյալի պարտավորությունը գործում է ոչ թե անմիջականորեն, այլ միջնորդավորված՝ քննիչի միջոցով: Այսինքն մեղադրյալը դատախազին տրված «խոստմամբ» պարտավորվում է քննիչին հայտնել կամ տրամադրել համաձայնագրով նախատեսված տեղեկությունները, ապացույցները, իսկ քննիչը ենթադրաբար պետք է ստանձնի այդ տեղեկությունները ստանալու և ամրագրելու պարտականություն:

Դրանից օրինաչափորեն կարող է ծագել հետևյալ հարցը. եթե քննիչը համաձայնագրին կողմ չէ և այն չի ստորագրել, ապա քննիչը պարտադրված է ապահովելու համաձայնագրով մեղադրյալի կողմից ստանձնված պարտականությունների կատարումը: Նույնիսկ գործող քրեադատավարական օրենսդրության շրջանակում ձևավորված պրակտիկան վկայում է, որ մեղադրյալը, որպես կանոն, շահագրգիռ չէ քննությանն օժանդակելու նախաձեռնությունն իր ձեռքում պահելուն և քննիչին տրամադրում է այն տեղեկությունները, որոնք վերջինս պահանջում կամ առաջարկում է ներկայացնել: Նախագծով սահմանված համագործակցության վարույթն այդ իմաստով բացառություն չէ և անհնար է անտեսել համագործակցության արդյունավետությունը բացառապես քննիչի մոտեցումներով, մասնագիտական հմտություններով ու կարողություններով պայմանավորված լինելու հանգամանքը: Դա նշանակում է, որ համագործակցության վարույթի շրջանակում քննիչը՝

ա/ առնվազն պետք է ունենա համագործակցող մեղադրյալին՝ ստանձնված պարտականությունները կատարելու պահանջ ներկայացնելու իրավունք,

բ/ համաձայնագիրը կնքելուց հետո մեղադրյալի կողմից պարտականությունների կատարման պատրաստակամություն հայտնելու պահից պետք է ծագի նրա՝ քննչական ու դատավարական գործողություններ կատարելու պարտականությունը:

Այդ առումով անհասկանալի է նաև Նախագծի 463-րդ հոդվածի 4-րդ մասի տրամաբանությունը, համաձայն որի՝ համաձայնագրի օրինակները հանձնվում են միայն մեղադրյալին և պաշտպանին, այսինքն համա-



ձայնագրի տեքստը քննիչին հանձնելը նույնպես պարտադիր չէ: Հատկանշական է սակայն, որ Նախագծի 464-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվել է համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիր կազմելուց հետո տվյալ մեղադրյալի վերաբերյալ վարույթն անջատելու և անջատված վարույթի նյութերին համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիրը, մեղադրյալի միջնորդությունը, դրա վերաբերյալ քննիչի կարծիքը, միջնորդությունը բավարարելու մասին դատախազի որոշումը, ինչպես նաև համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիրը կցելու պարտադիր պայման: Հիշյալ իրավանորմի պահանջից հետևում է, որ անջատված վարույթի նյութերին պարտադիր կցման ենթակա փաստաթղթերը նախ պետք է լինեն հիմնական վարույթում, որից հետո, համագործակցող մեղադրյալի մասն անջատելուց հետո դրանք տեղափոխվեն անջատված վարույթ, մինչդեռ Նախագիծը չի սահմանում համաձայնագիր կնքելու միջնորդության քննարկման ընթացքում քրեական վարույթի նյութերը դատախազին փոխանցելու, միջնորդությունը, այն բավարարելու մասին դատախազի որոշումը, ինչպես նաև համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիրը դատախազի կողմից քննիչին հանձնելու պայման պարունակող որևէ իրավադրույթ, իրավակարգավորման ինչպիսի եղանակը չի ապահովում Նախագծի 464-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դատավարական պահանջի իրացման գործընթացի պարզությունն ու հստակությունը:

Այդ առումով գտնում ենք, որ Նախագիծը քննիչին պետք է ճանաչի համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի կողմ՝ դրանով նախատեսված մեղադրյալի պարտավորությունների կատարումն ապահովող մասնակցի տեսքով, համաձայնագիրը պետք է ստորագրվի նաև քննիչի կողմից, ինչը թույլ կտա ամրագրելու քննիչի ու մեղադրյալի փոխհարաբերություններից բխող պարտականությունները և նրանց իրավունքները:

Այդ առումով Նախագծի 463-րդ հոդվածի 4-րդ մասը պետք է ձևակերպել հետևյալ կերպ. «Համաձայնագիրը ստորագրում են հսկող դատախազը, քննիչը, մեղադրյալը և

պաշտպանը: Համաձայնագրի մեկական օրինակ հանձնվում է քննիչին, մեղադրյալին և պաշտպանին: Դատախազի կողմից քննիչին է հանձնվում նաև համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիր կնքելու մասին մեղադրյալի միջնորդությունը, դրա վերաբերյալ քննիչի կարծիքը, միջնորդությունը բավարարելու մասին դատախազի որոշումը»:

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատախազության օրենսգրքի նախագիծ, փաստաթղթի կոդ Կ-084-14.09.2012, 29.11.2013-ՊԻ-010/0, www.parliament.am կայքից:

2. О РОЛИ АДВОКАТА-ЗАЩИТНИКА В ЗАКЛЮЧЕНИИ ДОСУДЕБНОГО СОГЛАШЕНИЯ О СОТРУДНИЧЕСТВЕ С ПОДОЗРЕВАЕМЫМ/ОБВИНЯЕМЫМ, М. О. Баев, Воронежский государственный университет, Вестник ВГУ, 2012:

3. "Уголовно-процессуальный кодекс Российской Федерации" от 18.12.2001 N 174-ФЗ (ред. от 13.07.2015) (с изм. и доп., вступ. в силу с 15.09.2015):

4. УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНЫЙ КОДЕКС Республики Казахстан (с изменениями и дополнениями по состоянию на 07.11.2014 г.):

5. Дьяконова В.В., указ. соч., ст. 91:

6. Бочкарев А.Е., указ. соч., ст. 80:

7. "Уголовно-процессуальный кодекс Российской Федерации" от 18.12.2001 N 174-ФЗ (ред. от 13.07.2015) (с изм. и доп., вступ. в силу с 15.09.2015):

8. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ին, 2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխություններով հանդերձ:

9. Досудебное соглашение о сотрудничестве. Анализ, практика, выводы, монография, А.Ю.Курсанов, Юнити-дана: Закон и право, 2012г, ст. 44-45:

10. Кубрикова М. Е. (Мария Евгеньевна), Актуальные вопросы института досудебного соглашения о сотрудничестве: автореферат, Челябинск, 2013. ст. 26-23:

11. Досудебное соглашение о сотрудничестве, проблемы совершенствования, Ф.К.Зиннуров, Г.Б.Мирзоев, Ф.Р.Хисамутдинов, С.Я.Казанцев, Н.Д.Эриашвили, Д.Р.Марданов, А.С.Виноградов, Н.В.Лантух, А.Ч.Хаиров, Ф.Ф.Исмаилов, А.А.Хайдаров, Юнити-дана 2014, ст. 16:

12. ՀՀ Քաղաքացիական օրենսգրք, ընդունված 1998թ. հուլիսի 28-ին: